ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԴԱՇՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
ДАШТСКИЙ СЕЛЬСКИЙ
МУНИЦИПАЛИТЕТ
АРМАВИРСКОГО МАРЗА

«06» 03 2012 թ.

N 24

Բջջային` 094 404 402
095 404 402

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ,

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն մարզպետ*

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի ավագանու 27.02.2013թ. կայացած հերթական թիվ 01 նիստում ընդունված որոշումները:

Առդիր՝ 9 թերթ:

*Դաշտի գյուղական համայնքի ղեկավար՝* ------------------------ *Հ. Պետրոսյան*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 2203-13
06 03 2013 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2013թ. թիվ 01

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.02.2013Թ. ԿԱՅԱՑԱԾ ԹԻՎ 01 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել օրակարգի հարցերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

------------------ Անահիտ Աղաջանյան

------------------ Աշոտ Աբրահամյան

------------------ Սարգիս Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------------------ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կ.Տ.

2013թվականի փետրվարի 27

գ.Դաշտ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի
ԹԻՎ 01 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի 2012թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը,բյուջեի ֆոնդային մաս ուղղելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 03-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 02-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող խմելու ջրի համակարգերը «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Դաշտի գյուղական համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն տրամադրելու մասին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 27 » փետրվարի 2013թ. — թիվ 02-Ն

### ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 69-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է՝

1. Հաստատել՝ Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի 2012թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

------------------ Աշոտ Աբրահամյան

------------------ Անահիտ Աղաջանյան

------------------ Սարգիս Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------ ՀՐԱՆՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կ.Տ.

2013թվականի փետրվարի 27

գ.Դաշտ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 02

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

| *Հ/Հ* | *Եկամուտներ* | *Պլան/12ամիս/* | *Փաստացի հազ.դր.* | *Կատարողական%* |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 2505,6 | 2643,8 | 105,5 |
| 2 | Գույքահարկ | 720,4 | 448,0 | 62,2 |
| 3 | Տեղական տուրք | 262 | 454,6 | 173,5 |
| 4 | Վարձակալական հ/հ | 200,0 | 201,6 | 100,8 |
| 5 | Այլ եկամուտներ | 20,0 | 4,9 | 24,5 |
| 6 | Ընդ.սեփ.եկամուտ | 3708,0 | 3752,9 | 101,2 |
| 7 | Դոտացիա | 10905,6 | 10905,6 | 100,0 |
| | ***Ընդ.եկամուտ*** | ***14613,6*** | ***14658,5*** | ***100,3*** |

| *Հ/Հ* | *Ծախսեր* | *Պլան/12ամիս/* | *Փաստացի հազ.դր.* | *Կատարողական%* |
|---|---|---|---|---|
| 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ | 11655,6 | 11398,9 | 97,8 |
| 2 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 273,0 | 263,0 | 97,8 |
| 3 | Փողոց. լուսավորում | 150,0 | 150,0 | 100,0 |
| 4 | Աղբահանություն | 456,0 | 456,0 | 100,0 |
| 5 | Երիտասարդ.ծրագրեր | 1019,0 | 1019,0 | 100,0 |
| 6 | Սոց.օգնություն | 900,0 | 900,0 | 100,0 |
| 7 | Պահուստային ֆոնդ | 160,0 | 0 | 0 |
| | ***Ընդամենը ծախսեր*** | 14613,6 | ***14186,9*** | 97,1 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

« 27 » փետրվարի 2013թ. թիվ 03-Ն

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը,բյուջեի վարչական մասից ուղղել 2013թվականի բյուջեի ֆոնդային մաս` 471 522դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ`

------------------ Աշոտ Աբրահամյան

------------------ Անահիտ Աղաջանյան

------------------ Սարգիս Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ------------------ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կ.Տ.

2013թվականի փետրվարի 27

գ.Դաշտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 27 » փետրվարի 2013թ. թիվ 04-Ն

## ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 3-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Դաշտ համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 17-ի «Դաշտ գյուղական համայնքի 2013թվականի բյուջեի հաստատման մասին թիվ 03-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի 1-ին տողի «2 806 600» թիվը փոխարինել «2 807 600»թվով,
2) որոշման 1-ին կետի 7-րդ տողի «12 137 900» թիվը փոխարինել«12 136 900»թվով,
3) որոշման 1-ին կետի 9-րդ տողի 3-րդ սյունակի «0» թիվը փոխարինել «553 900»թվով,
4) որոշման 2-րդ կետի 2-րդ տողի 3-րդ սյունակի «300 000» թիվը փոխարինել«853 900»թվով,
5)որոշման 3-րդ կետում ավելացնել նոր՝ 23-րդ տող «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 3-րդ սյունակում գրելով «553 900» թիվը,
6) որոշման 4-րդ կետի 1-ին տողի 3-րդ սյունակի «0» թիվը փոխարինել «553 900» թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

------------------ Աշոտ Աբրահամյան

------------------ Անահիտ Աղաջանյան

------------------ Սարգիս Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կ.Տ.

2013թվականի փետրվարի 27
գ.Դաշտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 27 » փետրվարի 2013թ. — թիվ 05-Ն

## ԴԱՇՏ ՅԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 02-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով,«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով,3-րդ մասով և 73-րդ հոդվածի 1-ին մասով.

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է՝

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի 2012թվականի դեկտեմբերի 17-ի ավագանու 02-Ն որոշման 2-րդ կետի հավելվածի 7-րդ տողի գործողությունը և վերացնել գյուղապետարանի աշխատակազմի 2րդ կարգի մասնագետի հաստիքը:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի 2012թվականի դեկտեմբերի 17-ի ավագանու 02-Ն որոշման 2-րդ կետի հավելվածում ավելացնել նոր 12-րդ տող՝ «Համայնքի ղեկավարի օգնական» --- 46 300դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

------------------- Աշոտ Աբրահամյան

------------------- Անահիտ Աղաջանյան

------------------- Սարգիս Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------- ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կ.Տ.

2013թվականի փետրվարի 27

գ.Դաշտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 27 » փետրվարի 2013թ. — թիվ 06

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Դաշտի գյուղական համայնքի ավագանին՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող խմելու ջրի համակարգերը /խմելու ջրի ջրագծերը - 8787.0 գծամետր/ անորոշ ժամկետով,անհատույց օգտագործման տրամադրել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

------------------ Աշոտ Աբրահամյան

------------------ Անահիտ Աղաջանյան

------------------ Սարգիս Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2013 թվականի փետրվարի «27»
գ.Դաշտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 27» փետրվարի 2013թ. թիվ 07

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և նկատի ունենալով Դաշտի գյուղական համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշի գյուղական համայնքի՝ սոցիալապես անապահով 7/յոթ/ ընտանիքների տրամադրել օնություն 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/դրամ ընդհանուր գումարով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

------------------ Անահիտ Աղաջանյան

------------------ Աշոտ Աբրահամյան

------------------ Սարգիս Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2013 թվականի դեկտեմբերի «17»

գ.Դաշտ